ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի «Գործադիր իշխանության գործառման փոխակերպումը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում» ատենախոսության վերաբերյալ

Հայաստանում գործադիր իշխանության փոխակերպման խնդիրները բազմաշերտ են և կապված են ինչպես քաղաքական համակարգի, այնպես էլ կառավարման մշակույթի և ինստիտուցիոնալ զարգացման հետ: Ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում արդի վերափոխումների համատեքստում, պայմանավորված նաև առաջիկայում սպասվելիք սահմանադրական բարեփոխումներով, գործադիր իշխանության տեսակիրառական զարգացումների և իշխանության այլ թևերի, սահմանադրական այլ քաղաքական ինստիտուտների հետ գործակցության հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Իրավաքաղաքական ընդհանրական բնորոշմամբ՝ կառավարությունն հավաքական իրավասության կոլեգիալ մարմին է, որը կոչված է իրականացնելու երկրում գործադիր ու կարգադրիչ (այսինքն՝ վարչական) գործունեության ղեկավարումը: Իհարկե, այս մոտեցումն ունի ընդհանրացված բնույթ, և նախագահական հանրապետություններին կամ նույնիսկ որոշ դուալիստական միապետություններին այն չի կարող վերաբերել, քանի որ այդ պետություններում կառավարություն՝ որպես այդպիսին, գոյություն չունի, այդտեղ չկա վարչապետի գլխավորությամբ նախարարների կաբինետ, իսկ գործադիր իշխանությունն իրականացնում է պետության գլուխը՝ իր նշանակած նախարարների միջոցով: Եթե կառավարության հասկացությունը փորձենք տալ նախագահական հանրապետությունների ու դուալիստական միապետությունների կտրվածքով՝ ապա կտեսնենք, որ այն իրենից ներկայացնում է պետության գլխին կից՝ խորհրդատվական

իրավասությամբ օժտված անձանց խումբ, որոնց լիազորություններն ածանցվում են վերջինիս (միապետի կամ նախագահի) լիազորություններից:

Ատենախոսության համար ընտրված թեման արդիական է: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևից տեղափոխվեց խորհրդարանական կառավարման ձևի: Այստեղ իշխանության կենտրոնը խորհրդարանն է, քանի որ հենց խորհրդարանի կողմից են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերի մարմինները: Խորհրդարանական կառավարման ձևը ամենևին չի նշանակում հանրապետության նախագահի պաշտոնի վերացում: Նախագահներ ունեն և պառլամենտական հանրապետությունները: Նախագահը պարզապես ազատված է գործադիր իշխանության իրականացման պարտականություններից: Դա հնարավորություն է ընձեռում, որ նա հաշտարար-իրավարարի և ուղեցույցի դեր կատարի երկրում գործող օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, ինչպես նաև մի կողմից կենտրոնական և մյուս կողմից՝ տեղական իշխանությունների միջև վեճեր ծագելիս:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է մի քանի ուղղություններով: Կառավարությունը գործադիր իշխանության իրականացման կարևորագույն մեխանիզմներից մեկն է, և նրա առանձնահատկությունը, ուրույն նշանակությունը կայանում է նրանում, որ այն՝ որպես գործադիր իշխանության մարմին, օժտված է օրենսդիր իշխանության ծրագրերը կյանքի կոչելու իրավասությամբ և ունի կարգադրիչ գործառույթ, որով ապահովում է իր առջև դրված խնդիրների լուծումը:

Թեև այստեղ հարկ է ընդգծել, որ կառավարության նշանակությունը, դերը և պետական մարմինների համակարգում նրա տեղը մեծապես պայմանավորված է ինչպես տվյալ երկրի պետության ձևի (կառավարման ձևի, պետական ռեժիմի) առանձնահատկություններով, այնպես էլ քաղաքական գործընթացներում ներքին ու արտաքին իրողություններով:

Պետական կառավարման գործընթացում իշխանության ճյուղերը զգում են միմյանց կարիքը և առանց նրանց փոխգործակցության համակարգը ուղղակի չի աշխատի: Բավական հաճախ պետության կառավարումը նույնացնում են միայն գործադիր իշխանության հետ, սակայն հենց զսպումների և հակակշիռների

համակարգի միջոցով պետության արդյունավետ կառավարման համար միայն այդ ճյուղի առկայությունը բավարար չէ: Ավելին, լրացուցիչ մեկնաբանությունների տեղ է տալիս նաև այս ճյուղերի անկախության հանգամանքը միմյանցից: Կառավարությունը՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, մշակում է նաև իր տարածքային քաղաքականությունը՝ որի շրջանակներում կանոնակարգվում են տարածքային կառավարման ընդհանուր բնույթի հարցեր:

Կարելի է արձանագրել, որ ատենախոսությունում լիարժեք կատարվել են հետազոտության նպատակից բխող խնդիրները, ինչը հեղինակին թույլ է տվել ձևակերպել կարևոր գիտատեսական և կիրառական նշանակություն ունեցող եզրահանգումներ:

Ատենախոսությունն առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների շարադրման տրամաբանական հետևողականությամբ և գիտական հիմնավորվածությամբ: Աշխատանքը շարադրված է գիտական, գրագետ լեզվով, ունի հստակ կառուցվածք և հանդիսանում է հեղինակային ինքնուրույն, ամբողջական հետազոտություն: Ուսումնասիրելով ծավալուն գիտատեսական գրականություն՝ ատենախոսը կարողացել է բազմակողմանիորեն վերլուծել գործադիր իշխանությանը վերագրվող արդի իրավաքաղաքական իրաղությունները և դրանց զարգացման պայմանավորող գործոնները:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Առաջին գլխում մանրամասն քննարկվում է գործադիր իշխանության ծագումնաբանական հիմնահարցրեը, ինստիտուցիոնալ նկարագիրը, բովանդակային շրջանակները: Հեղինակը առանձնացված անդրադառնում է իշխանության այս թևի հենքային, տեսակիրառական հայեցարակգային գաղափարախոսության և դրա փուլային զարգացումներին:

Երկրորդ գլուխը նվիրված է գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրման տեսական հիմքերին, որոնք ձևավորվել են տարբեր գիտական ուղղությունների՝ հատկապես քաղաքագիտության և հանրային կառավարման տեսության շրջանակներում: Դրանք ներառում են մի շարք մոտեցումներ, որոնք

բացատրում են, թե ինչ է նշանակում «արդյունավետ իշխանություն», «լավ կառավարում» և ինչպես կարելի է դրանք չափել:

Երրորդ գլխում քննության է ենթարկվում Հայաստանի Հանրապետությունում պետական և քաղաքական կառավարման արդյունավետության կատարելագործման հնարավորությունները: Ատենախոսի կողմից արդարացիորեն ընդգծվում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետական և քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացումը բարդ, բայց իրատեսական խնդիր է: Այն պահանջում է ոչ միայն առանձին բարեփոխումներ, այլ ամբողջական համակարգային մոտեցում, որը համադրում է ինստիտուցիոնալ, քաղաքական և հասարակական գործոնները:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացված են հիմնավորված եզրահանգումներ, գնահատումներ և առաջարկներ:

Վերոնշյալի հաշվառմամբ հարկ է նաև նշել, որ տենախոսությունը զերծ չէ որոշ քննարկման արժանի դրույթներից: Մասնավորապես, կարելի է առանձնացնել դրանցից հետևյալները.

1. Ատենախոսության թեմայի շրջանակներում, կարծում ենք, հարկ էր առանձնացված անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանության վերափոխումներին սահմանադրական բարեփոխումների շրջանակներում: Այս առումով աշխատանքը ավելի կշահեր, քանզի պետք էր ընդգծել 1991 թվականի անկախության հռչակումից հետո կառավարման կիսանախագահական մոդելի գործնականում կայացումը, որին հաջորդեց 1995 թվականի սահմանադրական ամրագրումը: Հաջորդիվ կարևոր էր անդրադառնալ 2015-2018 թվականներին սահմանադրական բարեփոխումներով կառավարման նոր, փաստացի հայաստանյան արդի իրականությանը անծանոթ մոդելին՝ խորհրդարանական հանրապետության անցնելու էվոլյուցիային: Նման մոտեցումը հնարավորություն կտար աշխատանքը արժևորել նաև ներկայումս ՀՀ-ում նախաձեռնված սահմանադրական նոր բարեփոխումների դիսկուրսում:

2. Շարունակելով նախորդ դիտարկումը՝ կարելի է փաստել, որ աշխատանքը թեմատիկ առումով նաև միջգիտակարգային է, հետևապես՝ մասնագիտական

գրականության և սկզբնաղբյուրների մասով կարելի է առաջնորդվել այդ մոտեցմամբ: Ատենախոսության վերլուծական խորքայնությունը կշահեր, եթե հետազոտական դաշտ բերվեին նաև իրավագիտական, հատկապես սահմանադրական (չնայած որոշ մեջբերումներ կատարվել են), հանրային կառավարման, պետական ու հանրային ծառայության թեմաներով հիմնարար աշխատություններ և փորձագիտական գնահատումներ, ինչպես նաև հատկապես ՀՀ քաղաքական բազմամակարդակ պաշտոնատար անձանց հրապարակումներ:

3. Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը մի շարք ուղղություններով գնահատում է Հայաստանի Հանրապետությունում պետական և քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական ուղղվածությունը: Այստեղ կարելի էր առանձնացված վերլուծել Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների բարեփոխումների գործընթացում արձանագրված խնդիրները, որի շրջանակներում ներկայացնել նաև հաջորդական քայլերի «ճանապարհային քարտեզ»՝ որպես համապարփակ հայեցակարգային առաջարկություն (որպես օրինակ կարելի է դիտարկել ներկայումս պաշտպանության բնագավառում մեկնարկած «Բանակի կերպափոխման հայեցակարգը» և դրանից բխող գործողությունների պլան-ժամանակացույցը):

4. Ատենախոսությունը զերծ չէ ձևակերպական ու ոճաբանական որոշ բացերից: Մասնավորապես, օրինակ,

- ներածություն բաժինը սովորաբար ավարտվում է աշխատանքի կառուցվածքի և բովանդակային նկարագրով,

- տեքստում շատ են հանդիպում հղումներ՝ հրատարակված նյութերի մասով առանց կոնկրետ էջերի նշումով, կամ էլեկտրոնային սկզբնաղբյուրների մասով առանց նյութի դիտման ժամանակահատվածի,

- աշխատանքի վերջում օգտագործված գրականության ցանկում մի շարք աղբյուրներում հարկ էր նշել աշխատությունների ամբողջական էջային ծավալները, կամ հոդվածային տարբերակներում՝ կոնկրետ հոդվածի ամբողջական էջերը և այլն:

Նշված դիտարկումներն ու առաջարկները հիմնականում արվում են գիտական քննարկումը խորացնելու նպատակով և չեն նսեմացնում հեղինակի կատարած ծավալուն աշխատանքի արժեքն ու նշանակությունը:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, շարադրանքի տրամաբանությունն ու բովանդակային ամբողջականությունը, վերլուծության հենքայնությունը և ձևակերպված արժեքավոր եզրահանգումները, առաջարկությունները՝ գտնում եմ, որ **Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի «Գործադիր իշխանության գործառման փոխակերպումը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում»** ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 մասնագիտությամբ գիտական աստիճան հայցելու համար ՀՀ ԲԿԳԿ-ի սահմանած պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Տ. ՔՈՉԱՐՅԱՆ

07.05.2026թ.

Պաշտոնական ընդդիմախոս պրոֆեսոր Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ